



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌՆԸԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 07/22**

18.04.2022թ.

ք. Երևան

ՀՀ ԱԺ պատգամավորների առնվազն 1/5-ը (այսուհետ՝ Դիմող) դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկում է ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 1-ին, 4-րդ և 164-րդ հոդվածներին:

Դիմողը դիմումի հիմքում դրել է հետևյալ հարցադրումը. «Արդյո՞ք ՀՀ արդարադատության նախարարի կողմից, որպես գործադիր իշխանության ներկայացուցիչ, դատական իշխանության ներկայացուցիչ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցումը համապատասխանում է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքին և արդարադատություն իրականացնելիս դատարանի անկախությանը:»:

Դիմողը նշում է, որ 01.11.2020 թվականից մինչև 21.12.2021 թվականը ներառյալ Արդարադատության նախարարի կողմից հարուցվել է թվով 35 կարգապահական վարույթ: Այսինքն՝ նշված գործիքակազմը լայնորեն իրացվում է Արդարադատության նախարարի կողմից, սակայն ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 145-րդ հոդվածի 1-ին մասը որևէ կերպ չի դիտարկում Արդարադատության նախարարությանը որպես միակ կարգապահական վարույթ հարուցող սուբյեկտ:

Ստեղծված իրավիճակը, ըստ Դիմողի, առաջացնում է սահմանադրականության խնդիր ոչ միայն Սահմանադրության 164-րդ, այլև Սահմանադրության 1-ին հոդվածի նորմ սկզբունք հանդիսացող «իրավական պետություն» պահանջի հետ:

Դիմողն անհրաժեշտ է համարում նշել նաև, որ վիճարկվող դրույթը որևէ կերպ չի բացառում այն իրավիճակը, երբ գործադիր իշխանությունը, չսպասելով կոնկրետ դատական ակտի ներպետական ատյաններով քննության սպառմանը, հանդես գալով որպես դատավարության կողմ, նախաձեռնի կարգապահական վարույթ՝ անուղղակի միջամտելով այլ ատյաններում կոնկրետ դատավորի կայացրած դատական ակտի վերաքննության կամ վճռաբեկության կարգով քննությանը:

Դիմողը գտնում է, որ դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս անկախության սահմանադրական պատվիրանը պետք է ապահովի նաև, որ գործադիր

իշխանության կողմից նշանակվող քննչական մարմնի ղեկավարը հնարավորություն չունենա նույն գործադիր իշխանության մարմնի կազմում հանդես եկող Արդարադատության նախարարին՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու միջնորդություն ներկայացնել:

Դիմողն անհրաժեշտ է համարում նշել նաև, որ վիճարկվող կարգավորումները որևէ երաշխիք չեն նախատեսում բացառելու համար այնպիսի իրավիճակներ, երբ Արդարադատության նախարարությունը, կոնկրետ գործով հանդես գալով որպես դատավարության կողմ, հարուցի կարգապահական վարույթ տվյալ գործով դատավորի նկատմամբ: Նշվածը կհանգեցնի նաև Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով երաշխավորված սկզբունքների խախտման:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, Դիմողը վիճարկում է ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 145-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 1-ին, 4-րդ և 164-րդ հոդվածներին:

Օրենսգրքի վիճարկվող դրույթի բովանդակությունը հետևյալն է.

1. Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեն՝

2) Լիազոր մարմինը.

Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝

Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

Սահմանադրության 4-րդ հոդվածի համաձայն՝

Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա:

Սահմանադրության 164-րդ հոդվածի համաձայն՝

1. Արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է, անաչառ և գործում է միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

2. Դատավորը չի կարող պատասխանատվության ենթարկվել արդարադատություն իրականացնելիս հայտնած կարծիքի կամ կայացրած դատական ակտի համար, բացառությամբ երբ առկա են հանցագործության կամ կարգապահական խախտման հատկանիշներ:

3. Իր լիազորությունների իրականացման կապակցությամբ Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Սահմանադրական դատարանի համաձայնությամբ: Սահմանադրական դատարանի դատավորն իր լիազորությունների իրականացման կապակցությամբ առանց Սահմանադրական դատարանի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից

հետո: Այս դեպքում ազատությունից զրկելը չի կարող տևել յոթանասուներկու ժամից ավելի: Սահմանադրական դատարանի դատավորին ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվում է Սահմանադրական դատարանի նախագահը:

4. Իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Բարձրագույն դատական խորհրդի համաձայնությամբ: Դատավորն իր լիազորությունների իրականացման կապակցությամբ առանց Բարձրագույն դատական խորհրդի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատությունից զրկելը չի կարող տևել յոթանասուներկու ժամից ավելի: Դատավորին ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվում է Բարձրագույն դատական խորհրդի նախագահը:

5. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը և կարգը սահմանվում են Սահմանադրական դատարանի մասին օրենքով և Դատական օրենսգրքով:

6. Դատավորը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Սահմանադրական դատարանի մասին օրենքով և Դատական օրենսգրքով կարող են սահմանվել անհամատեղելիության լրացուցիչ պահանջներ:

7. Դատավորը չի կարող զբաղվել քաղաքական գործունեությամբ:

8. Դատավորի լիազորությունները դադարում են լիազորությունների ժամկետն ավարտվելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելու կամ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու, նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու կամ քրեական հետապնդումը ոչ արդարացնող հիմքով դադարեցնելու, նրան անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու, նրա հրաժարականի, մահվան դեպքերում:

9. Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները՝ Սահմանադրական դատարանի որոշմամբ, իսկ դատավորի լիազորությունները՝ Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ, դադարեցվում են անհամատեղելիության պահանջները խախտելու, քաղաքական գործունեությամբ զբաղվելու, առողջական վիճակի պատճառով պաշտոնավարման անհնարինության, էական կարգապահական խախտում կատարելու դեպքերում:

10. Դատավորի համար սահմանվում է նրա բարձր կարգավիճակին և պատասխանատվությանը համապատասխանող վարձատրություն: Դատավորի վարձատրության չափը սահմանվում է օրենքով:

11. Դատավորների կարգավիճակին վերաբերող մանրամասները սահմանվում են Սահմանադրական դատարանի մասին օրենքով և Դատական օրենսգրքով:

Այսպես, Դիմողը վիճարկում է Օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետն այն հիմնավորմամբ, որ Արդարադատության նախարարի կողմից դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասությունը չի բխում իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի և իրավական պետության էությունից:

Ինչպես գիտենք, Հայաստանի Հանրապետությունում պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա:

Օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության է ենթարկում Բարձրագույն դատական խորհուրդը:

Օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասը, սահմանում է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմինների շրջանակը, որոնք են՝

1) Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը.

2) Լիազոր մարմինը.

3) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ սույն հոդվածի 1.1-ին կետով նախատեսված դեպքերում:

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայության դեպքում վարույթ հարուցող մարմինը որոշում է կայացնում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար Բարձրագույն դատական խորհուրդ միջնորդություն ներկայացնելու մասին (Օրենսգրքի 148-րդ հոդված): Իր հերթին, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը Բարձրագույն դատական խորհուրդը քննում է կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությունն ստանալու պահից եռամսյա ժամկետում (Օրենսգրքի 150-րդ հոդված), բացառությամբ Օրենսգրքով նախատեսված դեպքերի:

Նախ, անդրադառնանք կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմիններից յուրաքանչյուրին:

Այսպես, Հայաստանի Հանրապետության բոլոր դատավորներից կազմվում է Ընդհանուր ժողով, որը ձևավորում է Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով (Օրենսգրքի 74-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետ, 77-րդ հոդվածի 1-ին մաս): Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը կազմված է ութ անդամից, որոնցից վեցը՝ դատավոր անդամներ, իսկ երկուսը՝ դատավոր չհանդիսացող անդամներ: Դատավոր անդամներից երկուսն ընտրվում են մասնագիտացված դատարանների դատավորներից, երկուսը՝ առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորներից՝ համապատասխանաբար քրեական և քաղաքացիական մասնագիտացմամբ, մեկը՝ վերաքննիչ դատարանների դատավորներից, մեկը՝ Վճռաբեկ դատարանի դատավորներից: Որպես Էթիկայի և կարգապահական հարցերի

հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամի թեկնածու կարող է առաջադրվել այն իրավաբանը, որն օժտված է բարձր մասնագիտական որակներով, ունի իրավագիտության բնագավառում գիտական աստիճան կամ մասնագիտական աշխատանքի առնվազն հինգ տարվա փորձառություն, որն է կուսակցության անդամ չէ, և նրա նկատմամբ առկա չեն Օրենսգրքով նախատեսված սահմանափակումները:

Այսինքն՝ այս հանձնաժողովը ձևավորվում է դատական իշխանության համակարգում:

Լիազոր մարմինը, ըստ Օրենսգրքի 102-րդ հոդվածի 4-րդ մասի, արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարն է, այսինքն՝ Արդարադատության նախարարը, որը հանդիսանում է գործադիր իշխանության մարմին:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը կազմավորվում է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի հիման վրա և հանդիսանում է ինքնավար պետական մարմին (նշված օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մաս), ինչը նշանակում է, որ այս հանձնաժողովը չի պատկանում իշխանության որևէ ճյուղի:

Վերոգրյալի վերլուծությունից հանգում ենք այն եզրակացության, որ դատավորի նկատմամբ կազապահական վարույթ հարուցելու իրավասություն ունի երեք մարմին, որից մեկ հանդիսանում է դատական իշխանության մարմին, մեկը՝ գործադիր իշխանության, մյուսը՝ ինքնավար մարմին:

Ակնհայտ է, որ յուրաքանչյուր ժողովրդավար պետության առաջնային խնդիրն իշխանության յուրաքանչյուր թևի գործառույթային անկախության երաշխավորումն է: Դա առաջին հերթին վերաբերում է դատական իշխանությանը, քանի որ նշված թևն է իրականացնում արդարադատության, իսկ անկախ արդարադատության իրականացումն իշխանության այս թևի առաջնահերթ գործառույթային լիազորությունն է: Սակայն ոչ բոլոր դեպքերում է, որ դատական իշխանության անկախությունը լիարժեքորեն ապահովվում է:

Իր ժամանակին Մոնտեսքիուն պնդում էր, որ թագավորը, որը գործում էր որպես դատավոր և դրանով խաթարում գործադիր ու դատական իշխանությունների սահմանադրական բաժանումը, հեշտությամբ կարող էր անբարեխիղճ վկաների և գործընթացի մյուս մասնակիցների խաղալիքը դառնալ, որոնք ձգտում են հանրային իշխանությանը պարտադրել ծառայելու անձնական կամ խմբային անօրինական շահերին: «Օրենքը՝ արքայի աչքն է, որի օգնությամբ նա տեսնում է այն, ինչն առանց դրա տեսնել չէր կարող: Իրեն դատավորի պարտականությունը վերապահելով, նա գործում է ոչ իր օգտին, այլ իրեն հրապուրողների օգտին՝ ի վնաս իրեն»¹:

Այսինքն՝ գործադիր և դատական իշխանությունների գործառույթային և կառուցակարգային հստակ բաժանման խնդիրն արդի է եղել բոլոր ժամանակներում և բոլոր ժամանակներում է կարևորվել իշխանության այդ ճյուղերի հստակ բաժանման և հավասարակշռման ապահովումը:

¹ St' u Montesquieu. Spirit of the Laws / Trans. by Th. Nugent. New York: Hafner Press, 1975. Vol. I. Bk. 6. Ch. 4. - P. 73.:

Դատական իշխանության՝ իշխանության մյուս ճյուղերից բաժանման և լիակատար անկախության ապահովումը պայմանավորված է առաջին հերթին հենց այն կարևոր հանգամանքով, որ իշխանության այս ճյուղին է իրավասություն վերապահված գնահատել օրենսդիր ու գործադիր իշխանությունների գործունեության սահմանադրականությունն ու օրինականությունը և նրանց պահել սահմանադրական հավասարակշռության դաշտում: Դա բխում է Սահմանադրության 162-րդ հոդվածից՝ համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Արդարադատության իրականացմանը որևէ միջամտություն արգելվում է:

Սահմանադրության 164-րդ հոդվածով սահմանված են այն հիմնարար երաշխիքները, որոնք անհրաժեշտ են դատավորի անկախ ու անաչառ գործունեությունը երաշխավորելու համար: Սահմանադրությամբ դատական իշխանությանն է բացառիկ իրավասություն վերապահված լուծել իշխանության մարմինների սահմանադրական լիազորությունների հարցերով առաջացած վեճերը, պաշտոնապես բացահայտել օրենսդրական նորմի իրավական բովանդակությունը՝ ձևավորելով որոշակի նախադեպային իրավունք, ինչպես նաև՝ իրացնել անձի՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները:

Այսինքն՝ անկախ դատական իշխանությունն է երաշխավորում Սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքների անմիջական գործողությունը, որով Սահմանադրության 3-րդ հոդվածի ուժով սահմանափակված են իշխանությունները:

Դատական իշխանության ինստիտուտների կազմավորման կարգն ու գործունեության անկախության ապահովման սահմանադրական երաշխիքները կոչված են իշխանության այս թևին հեռու պահելու քաղաքական գործընթացներից ու քաղաքական ազդեցություններից, և նույնիսկ այն դեպքերում, երբ օրենսդիր ու գործադիր իշխանությունների համապատասխան ինստիտուտները կազմավորվում են մեկ քաղաքական ուժի կողմից, իշխանությունների զսպման ու հակակշռման հիմնական առաքելությունը գործնականում պետք է իրականացնի դատական իշխանությունը: Վերջինս հնարավոր է դառնում, երբ երաշխավորված է իրավունքի գերակայության սկզբունքը և առկա է իրավական ժողովրդավարություն, ինչպես նաև սահմանադրական, քաղաքական ու պառլամենտական մշակույթի անհրաժեշտ ու բավարար մակարդակ:

Բոլոր այն դեպքերում, երբ տվյալ նախադրյալները բացակայում են և իշխանությունների բաժանման համակարգում թերագնահատվում է դատական իշխանության պետաիշխանական ինքնուրույն առաքելությունը, ոչ միայն չի կարող լինել անկախ ու անաչառ արդարադատություն, այլև անխուսափելի են քաղաքական ու վարչական մենիշխանության հաստատումը և իշխանությամբ իրավունքի

սահմանափակումը, ինչը վերջին հաշվով հանգեցնում է քաղաքական, տնտեսական ու վարչական ներուժի սերտաճման²:

Դատարանների անկախության սկզբունքը երաշխավորված է բազմաթիվ միջազգային իրավական ակտերով:

Մասնավորապես, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանք քննելու կամ որևէ քաղաքացիական դատավարությունում իր իրավունքներն ու պարտականությունները որոշելու ընթացքում ունի օրենքի հիման վրա ստեղծված իրավասու, *անկախ* ու անկողմնակալ դատարանի կողմից գործի արդարացի ու հրապարակավ քննության իրավունք:

Դատարանների անկախության սկզբունքին անդրադարձել է նաև Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներով: 2006 թվականի սեպտեմբերի 20-ի ՍԴՈ-647 որոշման մեջ Սահմանադրական դատարանը նշում է. «11. Սույն որոշման 8-րդ կետում հստակեցված վեճի առարկայի տեսանկյունից անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել ՀՀ Սահմանադրության 94 հոդվածի 1-ին մասի իրավական բովանդակությանը: Այդ դրույթը սահմանում է. «Դատարանների անկախությունը երաշխավորվում է Սահմանադրությամբ և օրենքներով»: Վերջինս ենթադրում է, որ Սահմանադրությամբ և օրենքներով անհրաժեշտ սահմանադրաիրավական երաշխիքներ պետք է ստեղծվեն դատարանների անկախության ապահովման համար: Իր հերթին, դատարանների անկախությունը վերացական հասկացություն չէ: Այն ենթադրում է գործառնական, կառուցակարգային, նյութական ու սոցիալական անկախության այնպիսի նախադրյալներ, որոնք անհրաժեշտ ու բավարար են դատարանների ու ողջ դատական իշխանության անկախությունը երաշխավորելու համար:

ՀՀ Սահմանադրության 5, 91, 94, 97 հոդվածների դրույթները հիմնարար սահմանադրական սկզբունքներ են, որոնք ամրագրում են դատարանների՝ որպես միասնական պետական իշխանության ինքնուրույն թևի՝ դատական իշխանության, և դատավորների՝ որպես դատական իշխանության միակ կրողների, սահմանադրական կարգավիճակը՝ սահմանադրորեն երաշխավորելով նրանց անկախությունը: Օրենքները կոչված են իրավական լրացուցիչ երաշխիքներ ստեղծելու այդ անկախության ամրապնդման համար:

2002թ. սեպտեմբերի 26-ին անդրադառնալով Հայաստանի կողմից ստանձնված պարտավորությունների կատարմանը՝ Վեհաժողովը, ի թիվս այլ հարցերի, հատուկ կարևորեց դատաիրավական բարեփոխումներին հետամուտ լինելու անհրաժեշտությունը, մասնավորապես շեշտելով՝ «...երաշխավորել դատավորների լիակատար անկախությունը՝ Եվրոպայի խորհրդի չափանիշների համաձայն»:

² Տես՝ «Բարձրագույն դատական խորհուրդն իշխանությունների բաժանման համատեքստում», Գ. Գ. Հարությունյան, Իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, էջ 12, <https://court.am/storage/uploads/files/news/nOerjlsvO3kRmwYLYDk99xH28oiPsAJz40gHPfot.pdf>, 18.04.2022

Մակայն, գործող կարգավորմամբ ստացվում է, որ դատական իշխանության թնին պատկանող դատավորի նկատմամբ իրավասու է կարգապահական վարույթ հարուցել գործադիր իշխանության թնին պատկանող Արդարադատության նախարարը: Նշված խնդիրն առավել խոցելի է դառնում այն պարագայում, երբ օրինակ՝ կարգապահական վարույթը հարուցվում է այն դատական գործի շրջանակներում, որով Արդարադատության նախարարությունը հանդիսանում է դատավարության կողմ: Այս դեպքում, դատավորի գործունեության անկախության մասին խոսելն իմաստագուրկ է դառնում, քանի որ վերջինս արդեն իսկ կաշկանդված կլինի իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթով:

Հատկանշական է, որ օրինակ՝ օրենսդիր կամ գործադիր իշխանության մարմիններից որևէ մեկի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասությամբ օժտված չէ դատական իշխանության որևէ մարմին: Ինչն էլ իր հերթին նշանակում է, որ գործող կարգավորումը դատական իշխանության վրա ներագրելու ևս մեկ լծակ է, որը, փաստորեն լայնորեն կիրառվում է (հաշվի առնելով Արդարադատության նախարարի կողմից հարուցված կարգապահական վարույթների քանակը):

Դատավորի անկախությունը, բնականաբար, անսահման և անվերահսկելի երևույթ չի կարող լինել, սակայն զսպող մեխանիզմները պետք է հնարավորինս չեզոք պահեն դատական իշխանությունը իշխանության այլ ճյուղերից, բացառեն որևէ ճնշման կամ ներագրման գործադրումը: Տվյալ պարագայում, կարծում ենք, Օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված մարմինները՝ Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, լիովին բավարար են դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմինների ցանկը եզրափակելու համար: Իր հերթին, Օրենսգրքի 146-րդ հոդվածը սահմանում է դատավորի նկատմամբ Կարգապահական վարույթ հարուցելու առիթները: Այդպիսի առիթ է պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հաղորդումը: Այսինքն՝ Արդարադատության նախարարը կարող է կարգապահական վարույթ հարուցելու համար համապատասխան հաղորդում ներկայացնել, բայց ոչ նման վարույթ հարուցելու իրավասություն ունենալ:

Իրավական պետության գլխավոր խնդիրն առաջին հերթին գործառույթ-ինստիտուտ-լիազորություն շղթայում ներդաշնակ հավասարակշռության ապահովումն է՝ երաշխավորելով սահմանադրական գործառույթների համակարգային ամբողջականությունը, այն կրող ինստիտուտների կառուցակարգային լիարժեքությունը, դրանց լիազորությունների ներդաշնակությունը գործառույթներին: Սկզբունքային են սահմանադրական ինստիտուտների գործառույթային, հակակշռող և զսպող լիազորությունների հստակ բաժանումը և այդ լիազորությունների օպտիմալ հավասարակշռումը հենց սահմանադրական մակարդակում:

Գործող կարգավորումը չի բխում իրավական պետության նպատակներից, չի ապահովում իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի անխոչընդոտ իրացումը՝ հանգեցնելով դատարանների անկախության և անաչառության

խաթարմանը, որն էլ իր հերթին կասկածի տակ է դնում հենց արդարադատության բուն էությունը:

Անփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 1-ին, 4-րդ և 164-րդ հոդվածներին խնդրահարույց է:

 Recoverable Signature

Համակարգող՝

X Lyudvik Davtyan

Լյուդվիկ Դավթյան

Signed by: DAVTYAN LYUDVIK 1407840169